ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/08

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհեր Անանյանի

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի ներկայացուցիչ՝ Մ. Հախվերդյանի (Լիազորագիր տրված՝ 17.01.2019թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.01.2019թ. թիվ 26-3/371-19 գրությամբ Ա/Ձ Սեյրան Առաքելյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Սիսիանի համայնքապետարանի 09.01.2019թ. թիվ 6 գրության հիման վրա, 15.01.2019թ. թիվ 26-3/371-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Սեյրան

Առաքելյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Սեյրան Առաքելյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Սեյրան Առաքելյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/08 ընթացակարգի շրջանակներում 18.01.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության մոտ արձանագրված ժամկետանց հարկային պարտավորությունը հանդիսացել է դրոշմանիշային վճար, որը սակայն չի երևացել մասնակցի անձնական հարկային քարտում, ուստի մասնակիցը տեղեկացված չի եղել նշված վճարի մասին:

3. <u>«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 22.01.2019թ. միջնորդություն է ներկայացրել՝ խնդրելով վերջինիս ներգրավել գործով որպես երրորդ կողմ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 23.01.2019թ. միջանկյալ որոշմամբ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի միջնորդությունը բավարարվել է:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի մոտ միայն 49 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունն է առաջացել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Մինչդեռ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ արձանագրված մնացած ժամկետանց հարկային պարտավորությունները՝ 23 915 ՀՀ դրամ (արձանագրված 72 915 ՀՀ դրամից հանած 49000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի գումարը) առաջացել են այլ հարկատեսակների գծով:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ունեցած տեղեկությունների համաձայն՝ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի մոտ առկա 23 915 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունից՝ 18 429 ՀՀ դրամ եկամտահարկի գծով է, որից 8 326 ՀՀ դրամը կուտակված տույժ, իսկ 5 486 ՀՀ դրամը՝ շրջանառության հարկի գծով, այսինքն՝ 49,000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարների գծով և 23 915 ՀՀ դրամ եկամտահարկի և շրջանառության հարկի գծով է:

Փաստորեն, Ա/Ձ Սեյրան Առաքելյանի մոտ առկա 23 915 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունները եկամտահարկի և շրջանառության հարկի գծով են, իսկ մասնակցի գնային առաջարկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր չափաբաժիններով առկա 23 915 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունները գերազանցում են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Ա/Ձ Սեյրան Առաքելյանի մոտ առկա 23 915 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը որը «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով չէ, այլ եկամտային հարկի և շրջանառության հարկի գծով է և գերազանցում է «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման 38 չափաբաժիններից թվով 35 չափաբաժինների գնային առաջարկների մեկ տոկոսը, այսինքն՝ 23 915 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունները՝ գերազանցում են Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման թվով 35 չափաբաժինների ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, ընկերությունը խնդրել է Ա/Ձ Սեյրան Առաքելյանին վերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիս ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. **<u>Սիսիանի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Սիսիանի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.01.2019թ. թիվ 6 գրությամբ հայտնել է, որ «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1-10-րդ, 14-38-րդ չափաբաժինների մասով Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է կատարվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն՝ Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ 72 916 ՀՀ դրամ: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ կարգ) 44-րդ կետը, որոշել է Սեյրան Առաքելյան Ա/Ձ-ի հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/08 ընթացակարգի շրջանակներում 18.01.2019թ. ժամը 10:10-ին նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. **<u>ՍՑ-ԱՄ-2019/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2019/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Սիսիանի համայնքապետարանի կողմից Սիսիանի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 07.12.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Սեյրան Առաքելյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության կայացված որոշմամբ Ա/Ձ Սեյրան Առաքելյանը 1-10-րդ, 14-38-րդ, չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Սեյրան Առաքելյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 72 916 ՀՀ դրամի չափով:***

6. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.01.2019թ. թիվ 26-3/371-18 գրությունը, Սիսիանի համայնքապետարանի 09.01.2019թ. թիվ 6 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Սիսիանի համայնքապետարանի կողմից Սիսիանի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 07.12.2018թ. հայտ է ներկայացրել Ա/Ձ Սեյրան Առաքելյանը:

Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության կայացված որոշմամբ Ա/Ձ Սեյրան Առաքելյանը 1-10-րդ, 14-38-րդ, չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ա/Ձ Սեյրան Առաքելյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 72 916 ՀՀ դրամի չափով:***

Մասնակիցը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 07.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Մասնակցի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Մասնակիցը ունեցել է 18 429 ՀՀ դրամ՝ եկամտային հարկի գծով և 5486 ՀՀ դրամ շրջանառության հարկի գծով (ընդհանուր՝ 23 915 ՀՀ դրամ) ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Մասնակիցը ներկայացրել է նաև ՀՀ ՊԵԿ-ի կողմից 17.01.2019թ. տրված թիվ 25-19 տեղեկանքը, համաձայն որի 07.12.2018թ. դրությամբ Մասնակիցն ունեցել է ***72 915 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորության, որից 18 429 ՀՀ դրամ՝ եկամտային***

հարկի գծով, 5 486 ՀՀ դրամը՝ շրջանառության հարկի գծով և 49 000 ՀՀ դրամը դրոշմանիշային վճարի գծով:

Ուսումնասիրելով ներկայացված քաղվածքն, արձանագրում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Մասնակցի մոտ արձանագրված 72 915 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունից 49 000 ՀՀ դրամի պարտավորությունը արտացոլված չի եղել Մասնակցի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքում, այնուամենայնիվ, նույն քաղվածքում առկա 23 915 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը գերազանցում է Մասնակցի կողմից մի շարք չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը (առավելագույնը կազմել է 1 535 300 ՀՀ դրամ՝ 22-րդ չափաբաժնի համար):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ Ա/Ձ Սեյրան Առաքելյանը «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-19/01» ծածկագով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.01.2019թ. թիվ 26-3/371-19 գրությամբ Ա/Ձ Սեյրան Առաքելյանին (ՀՎՀՀ՝ 79802779) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Սեյրան Առաքելյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ